

Արքայական խոսքը մեր կմնա հավետ:

Վահան Տերյան

**Մայրենի
4 դասարան**

1. Ո՞ր շարքում են բնակիչները դասավորված ճիշտ նույն հաջորդականությամբ, ինչ նրանց հետևյալ

ապրելատեղերը՝ փեթակ, որջ, տուն, ջուր, բույն: (0,5 միավոր)

Ա. մեղու, արջ, մարդ, շուն, ձուկ

Բ. մեղու, արջ, ձուկ, մարդ, շուն

Գ. մեղու, շուն, մարդ, ձուկ, արջ

Դ. մեղու, արջ, մարդ, ձուկ, շուն

Ե. մեղու, արջ, շուն, ձուկ, մարդ

2. Յուրաքանչյուր բառի համար գրի՝ր երկու հոմանիշ և մեկ հականիշ: (3 միավոր)

	հոմանիշ	հականիշ
շահ		
սկսնակ		
խուճապ		
չքնաղ		
սեղմ		

3. Վանդակներում լրացրո՛ւ այնպիսի տառեր կամ տառակապակցություններ, որ ստացվեն անխիղճ բառի հոմանիշները: (0,8 միավոր)

	մարդ	
	մարդ	

4. Օղ բառով կազմի՛ր բարդ բառ: Բառի վերջին բաղադրիչն օգտագործելով՝ կազմի՛ր երկու նոր բառ: (0,9 միավոր)

5. Բացատրի՛ր հետևյալ դարձվածքների իմաստը: (2,5 միավոր)

ականջին օղ անել _____

երես տալ _____

զլուխ տալ _____

բաց ճակատով _____

աշխարհով մեկ անել _____

6. Հետևյալ բառակապակցություններն արտահայտի՛ր մեկ բառով: (2,5 միավոր)

Հողմից հալածված _____

Լեզվին գոռ տալ _____

գինի վաճառող _____

զրուցել սիրող _____

օձերի խումբ _____

7. Գնդիկ Բոքոնիկն ունի ութ խմորե գնդիկ, որոնց վրա գրված է մեկական տառ: Այդ տառերն են՝ խ, հ, ն, ու, ց, ա, ց, թ: Գնդիկ Բոքոնիկը քանի՞ գնդիկ պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը: (1 միավոր)

8. Ո՞ր բառն է հետևյալ շարքում «ավելորդ»: Ընդգծի՛ր: (0,6 միավոր)

ա/ հնչյուն, փայլուն, ծաղկուն, ցայտուն, կանգուն

բ/ մեծ, խոշոր, հսկա, խոժոռ, վիթխարի

9. Ո՞ր բառի տառերի վերադասավորումով նոր բառ չես կազմի: (0,9 միավոր)

ա/ ծառա բ/ վտակ գ/ սեղան դ/ կամար ե/ կավիճ

10. Բոլոր բառերում, բացի մեկից, մեկ տառի փոփոխության արդյունքում ինչ-որ բաներ կշատանան: Ո՞ր բառը կմնա միայնակ: (0,8 միավոր)

ա/ շորոր բ/ աքլոր գ/ մասուր դ/ սալոր ե/ օրոր

11. Ավարտի՛ր առածները: (2,5 միավոր)

Հագուստի նորն է լավ, _____:

Աշխարհի շինողն է _____:

Աշխատող խոփը _____:

Մախաթը պարկում _____:

Արհեստ ունեցողը _____

_____:

